*ի չերկիրս Վայոց ձոր, ի գեօղս, որ կոչի Սրկղունք, ի դուռն սբ Գէորգայ և այլ սրբոց, որ աստ կան հաւաքեալ. ի կաթուղիկոսութեան սուրբ էջմիածնայ տէր Մելքիսէթի և առաջնորդութեղւոյս Յովհաննէս եպիսկոսի»**: Մենք շատ հաճախ տեսանք, որ Սրկղունքը Գեղարդայ Պռոշյանց եպիսկոպոսության մասն էր, ուրեմն և այս Հովհաննեսը Գեղարդա եպիսկոպոս էր:

---

Նույն Սրկղունիքում, որ Վայոց ձորի՝ ներկա Բաշքյանդն է (եջ 38) Յենովքի կալի մոտ, գյուղի հյուսիսային կողմը չեղած հանգըստարանում կա մի գերեզմանաքար, այսպիսի արձանագրությամբ.

*Այս է հանգիստ Ղալաբէգին, որ է | որդի Քարամին. Թվ. ՌՃԹ= =1660:*

---

Ածոփա վանքի հարավային դրան ճակատին, Հովհաննես եպիսկոպոսի արձանագրության տակ գըրված է հետևյալը.

*Ես տր Ղազարս ի գեղէն Մարտիրոսէն, շինել ետու Թումա | իզ դուռս սբ ածածնիս վս ծնողաց իմոց պարոն Աղաճանին եւ կենակցին Սիրմարքին եւ եղբօրն իմոյ Վէլիճանին, կողակիցն Փարուն եւ կողակցին իմոյ Մարիանին Թվ. | ՌՃԻ= =1671:*

Սորա տակը.

*Ես Մարտիրոսեցի պարոն Լալէս եառ (s!) բաժլին: Ժ: Թուման ի? հոգոյ հաւրն | իմոյ Մարտիրոսին, որ նաոՙ ամէն զգործն կատարեաց եւ մաւրն իմոյ | Մուրասին: Լ: Թուման տվի սբ ածած (պատկ. 110):*


Գռուշյանց? արձանագր. Ածոփա վանքում ժէ. դարում. Պատկեր 110.

Սորա կողքին.

*Խաչս իշակ է (s!) Լալին եւ կողակցին Կուլփխանին | եւ ո ր դ ո ց ն Ավգին, Հախնզ | արին, Մ ա ր տ ս ի ն (Մարտիրոսին), եւ եղբս իմ պարոն Էլիազին, որ ավաք: Դ: Թուման սբ եկղյս. Թվ: ՌՃԻ (=1671):*

Յեկեղեցու ներսը հյուսիսային պատին.

*Խչս յշկէ, խչս յշկէ, խչս յշկէ, խչս յշկէ | խչս յշկէ Մուրադին եւ Մուրասին, Էլիաչին, Կուլխանին, Լալին եւ | կողկցն հօնկլյն (հանգուցելոյն) Շահզատթումբ. Մարիանին մօրն, Մարտիրոսին ՌՃԻ (1671):*

Մարտիրոս գյուղը, որտեղից ծագում են այս արձանագրությունների մեջ հիշված անձինք, Պռոշյանց կեդրոններից մեկն էր Ամիր Հասան Ա.-ի ժամանակ (եջ 44—45, 146, 148 շ.) և գտնվում է Ածոփից դեպի հյուսիս, Շահապունյաց և Վայոց ձորի անջրպետ կազմող լերան վերա, Ցաղյուրդ գագաթի ստորոտում: Ածոփը, բայց ավելի հավանական, Մարտիրոս գյուղը պիտի լիներ Իսրայել Օրբի հայրենիքը, որ, ինչպես կտեսնենք Պռոշյանց տոհմի վերջին մոհիկանն էր պատմության մեջ:

---

* Հավել. Բ. 7: